ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2018ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքում կայացվել է ավագանու 6հերթական և 5 արտահերթ նիստեր,որի ընթացքում ավագանին կայացրել է 80 որոշում: Համայնքի ղեկավարը 2018թվականի ընթացքում ընդունել է 101 որոշում և 59 կարգադրություն: Համայնքապետան է մուտք եղել 250 գրություն և առաքվել է 187գրություն: Թվով 856 բնակիչների տրվել է տարբեր բնույթի տեղեկանքներ,բնութագրեր,երաշխավորագրեր:
Կազմվել է 2018թվականի աշխատանքային տարեկան պլան և համայնքի տարեկան բյուջեն.
Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով բյուջեի կատարողականի վերաբերյալ տրվել է հաշվետվություն և տեղադրվել պաշտոնական կայքում: Համայնքապետարանում և ենթակա կազմակերպություններում իրականացվել ընթացիկ տարվա սեփականության գույքի հաշվառման աշխատանքներ: 2018թվականի դեկտեմբերի 3-ին համայնքապետարանում կայացել է համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի պաշտոնի մրցույթ:

1.Ֆինանսների բնագավառ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի 2018թվականի բյուջեն կազմում է՝վարչական մաս 93372.2հազ դրամ և ֆոնդային մաս՝ 7144.9հազ.դրամ.
-2018թվականի ընթացքում 48453.8 հազար դրամ գումար հատկացվել է օրենսդիր և գործադիր մարմինների աշխատանքները կորդինացնելու և իրականացնելու համար.

-2762.5հազար դրամ գումար է ծախսվել <<Մյասնիկյանի երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության պահպանման և սպասարկման համար
-14629.8 հազ.դրամ գումար է ծախսվել <<Մյասնիկյան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության պահպանման և սպասարկման համար:
-Համայնքի վարչական բյուջեի մնացորդը կազմում է՝ 8328.0հազար դրամ, ֆոնդային բյուջեի մնացորդը՝ 369.5հազ.դրամ

2.Կոմունալ տնտեսություն և բարեկարգում

1. 5600.0 հազար դրամ գումար է հատկացվել խորքային հորի վերանորոգման և կահավորման համար, որը կարող է սպասարկել համայնքի դպրոցը և մոտ 30 գյուղացիական տնտեսություններ.
-1000.0հազ.դրամ որպես ներդրում հատկացվել է <<Շենիկ>> ՋՕԸ-ին՝ առուների մաքրման և ոռոգման սեզոնի կազմակերպման համար
- 950.0 հազար դրամ հատկացվել է ճանապարհների ընթացիկ վերանորոգման համար՝ կատարվել է փոսալման և հարթեցման աշխատանքներ.
- 880.0հազար ծախսվել է և թվով չորս փողոց ստացել արտաքին լուսավորություն
- 4225.6հազար դրամ հատկացվել է համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման համար,1600.0հազ.դրամ՝ կոյուղագծի մաքրման և կեղտաջրերի հեռացման համար.
-Աշխատանքներ է տարվել ապօրինի շինությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ,տրվել է երկու շին.թույլտվություն.

3.Գյուղատնտեսություն

-2018թվականի ընթացքում գյուղացիական տնտեսությունների գյուղ.մթերքների արտադրանքը կազմել է՝ ծիրան՝ 505տ, դեղձ՝358, խաղող՝826տ,բոստանային մշակաբույսեր՝900տ,բազմամյա խոտաբույս՝1101տ
-Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսության արտադրության վարկավորման գործնթացին
հողաշինության բնագավառում աշխատանքներ են տարվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման, հողամասերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ համայնքում տարվել է առկա անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքներ և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ.
-Աշխատակազմի կողմից ուսումնասիրվել, պարզաբանվել և օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվել գյուղատնտեսության վերաբերյալ շուրջ 25 դիմումներ.
-Պետական աջակցությամբ համայնքում գյուղացիական տնտեսություններին է հատկացվել է 4050 կգ ֆոսֆորորական և 3850 կալյումական պարարտանյութ.
-Ղեկավարվելով <<Հրապարակային սակարկությունների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետով օտարվել է 7.0հա հողատարածք –180.0 հազար դրամ գումարի ձեռք է բերվել տնկիներ և բաժանվել հող օգտագործողներին.

4 Սոցիալական ծառայություն

-ՈՒժեղ քամու հետևանքով տուժած թվով 6ընտանիքների հատկացվել է 220.0հազ. դրամ վնասված տաիքների վերանորոգման համար

- արտակարգ իրավիճակի՝ հրդեհի հետևանքով տուժած, համայնքի բնակիչ՝ Աստղիկ Հարությունյանի ընտանիքին հատկացվել է 200.0հազար դրամ օգնություն՝ բնակելի տունը վերանորոգելու և կահավորելու համար (հիմք՝ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական անձանց պատճառված վնասի գնահատման արձանագրություն)
-Համաձայն համայնքում հաստատված կամավոր լիազորությունների կարգի և <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի 2200.0հազար դրամ գումար որպես դրամական աջակցություն տրամադրվել է հաշմանդամներին ,հիվանդներին, սոցիալապես ծանր, անապահով պայմաններում բնակվող քաղաքացիներին՝ վիրահատման ծախսերի,դեղորյաքի,վառելափայտի ձեռք բերման,թաղման հետ կապված ծախսերի և ապրուստի կարիքները հոգալու համար

5.Կրթության և երիտասարդության բնագավառ

-2746.8 հազար դրամ գումար հատկացվել է և ամբողջովին վերանորոգվել է մանկապարտեզի խոհանոցը,դահլիճը և խմբերից մեկը, մանկապարտեզը համալրվել է նոր գույքով
-2.540.0հազար դրամ հատկացվել է համայնքի կուլտուրայի տան տանիքի վերանորոգման նախագծահետազոտական աշխատանքների կատարման համար

-990.0հազ. դրամ գումար է հատկացվել համայնքի 2 կանգառներում սպասասրահ տեղադրելու համար
Մյասնիկյան համայնքի մուտքի ճանապարհին տեղադրվել համայնքի անվամբ վահանակ և լուսավոր խաչ,տրամադրելով 850.0հազար դրամ.
-3765.2 հազար դրամ գումար է հատկացվել համայնքում սպորտային, մրցութային խաղեր կազմակերպելու,ինչպես նաև տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառում անցկացնելու համար
-967.0հազար դրամը հատկացվել է Ամանորի տոնածառի տեղադրման,համայնքի գլխավոր փողոցի զարդարման և թվով 250 երեխաների բաժանվել է նվերներ՝ տոպրակների տեսքով.
-Առաջին անգամ դպրոց հաճախող մանկապարտեզի երեխաներին բաժանվել է դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ.

<u>6.Բյուջեի կատարողականը</u>

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ընդհանուր վարչական բյուջեն կատարվել է՝ 101.4%
ա/սեփական եկամուտների գծով՝ 106.5%
բ/հողի հարկի գծով՝ 102.1%
գ/գույքահարկի գծով՝ 108.7%
դ/տեղական տուրքերը՝ 131.7%

ե/ ոչ հարկային եկամուտները՝ 107.3%
2.Վարչական բյուջեի ծախսերը կատարվել է՝ 92.3%
ա/տեղական ինքնակառավարում՝ 92.1%
բ/կրթություն և գիտություն՝ 97.3%
գ/սոցիալական ապահովություն՝ 73.3%
դ/մշակույթ ,սպորտ և կրոն՝ 83.3%
ե/արտաքին լուսավորություն՝ 100%
զ/ճանապարհների վերանորոգում՝ 100%
է/աղբահանում և կեղտաջրերի հեռացում՝ 100%

Ֆոնդային բյուջեի ծախսերը կատարվել է՝ 94.8%
Համայնքապետարանը տնտեսել է 8200.0հազար ,որը փոխանցվել է 2019թվականի ֆոնդային բյուջե:

Համայնքապետարանը աշխատավարձի և սոցիալական վճարների գծով պարտք չունի:

<u>Համայնքի հիմնախնդիրներն են՝</u>

1.Համայնքի կուլտուրայի տան տանիքի խնդիր

2.Ոռոգման ջրի խնդիր

3.Կոյուղու և համայնքամիջյան ճանապարհների խնդիր

Համայնքի ղեկավար Տ.Բաղդասարյան

2019թվականի հունվարի 29

Մյասնիկյան համայնք